



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0562/02/15թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0562/02/15թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Աբրահամյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Կ.Սաղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ 9-ին նոյեմբերի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով՝

նախագահությամբ՝ դատավոր Ա.Աբրահամյանի
դատավորներ՝ Վ.Հովսեփյանի
Ի.Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննության առնելով ըստ հայցի «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ «Մհեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 168.000 /հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին և ըստ «Մհեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշման դեմ «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Մեսրոպյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությունն /այսուհետ՝ նաև Հայցվոր/ ընդդեմ «Մհեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ նաև Պատասխանող/ դիմել է ԼՂՀ

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/՝ 168.000 /հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջով:

<<Միեր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ <<Ստեփանակերտի համայնքային ծառայություն>> փակ բաժնետիրական ընկերության հակընդդեմ հայցով դիմել է Առաջին ատյանի դատարան՝ իր և Հայցվորի միջև 2013թ. հունվարի 15-ին կնքված երթուղու սպասարկման ծառայությունների մատուցման հմ. 6, 7 և 8 պայմանագրերն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Առաջին ատյանի դատարանի 2015թ. հունիսի 29-ի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

Հայցվորի ներկայացուցչի՝ Ա.Մեսրոպյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2015թ. հունիսի 29-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2015թ. սեպտեմբերի 22-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորը: Գերագույն դատարանի 2015թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Հայցվորը 2015թ. հոկտեմբերի 12-ին կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել: Գերագույն դատարանի 2015թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, մերժելով վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել /կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործողություն/, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար: Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել նաև նույն օրենսգրքի 779-րդ հոդվածի 1-ն մասը, որի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով նշված ժամկետներում և կարգով:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է կողմերի միջև կնքված պայմանագրերով:

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, որի համաձայն դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ

հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածը, որի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Կիրառելով նշված հոդվածը՝ դատարանն ապացուցման բեռը դրել է Հայցվոր կողմի վրա: Մինչդեռ պետք է լիներ հակառակը: Վերաքննիչ դատարանի կողմից վերոնշյալ խախտումները հանգեցրել են գործի սխալ լուծման:

Պայմանագրերի 3.1. կետի համաձայն՝ Պատասխանողն իրավունք ունի ներկայացնել գրավոր առաջարկություններ երթուղու սպասարկումը բարելավելու վերաբերյալ: Սակայն, մինչև դատարան դիմելը և նույնիսկ մինչև դատաքննությունը, Պատասխանողը ոչ մի անգամ մատուցված ծառայության որակի համար գրավոր կամ բանավոր բողոք, առաջարկություն չի ներկայացրել, ինչը նշանակում է, որ ընդունել է աշխատանքները, բայց դիտավորյալ չի կամեցել վճարել ծառայությունների համար նախատեսված վճարը և դատարանում անհիմն հայտարարել է, որ հայցը չի ընդունում, քանի որ ծառայությունները չեն մատուցվել: Պատասխանողը ընդամենը գրությամբ, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու մասին պահանջ է ներկայացրել՝ առանց պատճառաբանության և ծախսերը վճարելու պայմանի բացակայության: Նույն ձևով անցած ժամանակահատվածի համար Պատասխանողն ընդունել է նույն որակի մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

Կողմերի միջև կնքված պայմանագրերով չի սահմանվել աշխատանքը հանձնելու որևէ ձև, որը Հայցվորը խախտեր, և որ ամիսներ շարունակ Պատասխանողը համարել է Հայցվորի պարտականությունները կատարած, սակայն հետագայում անհասկանալի պատճառով չի ընդունել: Վճարման պարտականությունից նա միայն կարող է ազատվել պայմանագրի 6-րդ կետի համաձայն, որը նախատեսում է կողմերի ազատումը պատասխանատվությունից անհաղթահարելի ուժի առկայության դեպքում:

Հաշվի առնելով, որ Ստեփանակերտ քաղաքում հասարակական տրանսպորտի պահանջարկն ապահովում են երկու ընկերություն, որոնցից մեկը Պատասխանողն է, և այն բազմաթիվ մարդկանց համար առօրյա կանոնավոր փոխադրման միջոցն է հանդիսանում, ուստի հայցի մերժման դեպքում Պատասխանողը կշարունակի նման անպատասխանատու վերաբերմունքը և խախտումներով կկատարի փոխադրումները, որից տուժվում են և՞ ուղևորները, և՞ Հայցվոր ընկերության աշխատողները, որոնք իրականացնում են աշխատանքները, սակայն աշխատավարձ չեն կարողանում ստանալ՝ Հայցվորի համար առաջացնելով ծանր հետևանքներ:

Բողոքաբերը նաև նշել է, որ երկու ընկերությունների կողմից կնքված պայմանագրերն ուժի մեջ են, չեն լուծվել երկկողմ համաձայնությամբ կամ դատական կարգով, անվավեր չեն ճանաչվել, դեռ ավելին, Պատասխանողի ներկայացրած նույնաբովանդակ պահանջը մերժվել է:

Հաշվի առնելով, որ Հայցվորը ներկայումս նույնպես շարունակում է կնքված պայմանագրերի հիման վրա մատուցել ծառայությունները, իսկ Պատասխանողն որևէ

վճարում չի կատարում, ուստի գործով կայացված Գերագույն դատարանի որոշումը կարևոր նշանակություն կունենա օրենքի միատեսակ կիրառության և նույնանման պահանջներով վճիռների կայացման համար:

Բողոք բերող անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2015թ. սեպտեմբերի 11-ի որոշումը և հայցը բավարարել:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը`

1. Հայցվորի և Պատասխանողի միջև 2013թ. հունվարի 15-ին կնքվել են թթ. 6, 10 և 11 երթուղիների սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրեր.

2. Ըստ կնքված պայմանագրերի 2.2 կետերի` Հայցվորը պարտավորվել է մատուցել հետևյալ ծառայությունները`

ա. շահագործման ընթացքում ապահովել Պատասխանողի կողմից հատկացված միկրոավտոբուսների /ավտոբուսների/ համար նախատեսված երթերի կատարումը, շարժման չվացուցակին համապատասխան,

բ. Հաղթանակի հրապարակի երթակարգավորման կետի միջոցով ապահովել Պատասխանողի կողմից ներկայացված միկրոավտոբուսների /ավտոբուսների/ աշխատանքի հաշվառումը, երթերի գրանցումը և երթուղու սպասարկման հսկողությունը: Ճանապարհային թերթիկներում կատարել համապատասխան նշումներ փաստացի կատարված երթերի համար,

գ. մինչև միկրոավտոբուսների /ավտոբուսների/ երթուղի դուրս գալը, երթակարգավարի միջոցով ստուգել Պատասխանողի միկրոավտոբուսների /ավտոբուսների/ սանիտարական վիճակը, վարորդների փաստաթղթերի համապատասխանությունը,

դ. յուրաքանչյուր ամսվա վերջին 5 աշխատանքային օրերի ընթացքում Պատասխանողին հատկացնել հաջորդ ամսվա համար նախատեսված անհրաժեշտ քանակի ճանապարհային թերթիկներ,

ե. երթևեկության անվտանգությանը սպառնացող /ի հայտ եկած/ գործոնների մասին տեղյակ պահել Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնին և գործել նրա ցուցումներով,

զ. երթուղու որևէ հատվածում միկրոավտոբուսների /ավտոբուսների/ երթևեկության հարկադրված դադարեցման կամ սահմանափակման դեպքերում, համաձայնեցնելով Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի հետ, ապահովել երթուղու ժամանակավոր շահագործումն այլ ուղեգծով,

է. Պատասխանողին տեղեկացնել երթուղու սպասարկման ընթացքում հայտնաբերված թերությունների մասին:

3. Ըստ գործի նյութերի` Հայցվորի կողմից ապահովվել են միայն Հաղթանակի հրապարակի երթակարգավորման կետի միջոցով Պատասխանողի կողմից

ներկայացված միկրոավտոբուսների /ավտոբուսների/ աշխատանքի հաշվառումը, երթերի գրանցումը և երթուղու սպասարկման հսկողությունը:

4. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ժամկետ է սահմանվել յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին հինգ աշխատանքային օրերը:

5. Պայմանագրով ստանձնած այլ պարտավորությունների կատարման և դրանք Պատասխանողին հանձնված լինելու որևէ ապացույց սույն քաղաքացիական գործում առկա չէ:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Գործի նյութերի համաձայն՝ Հայցվորը հայցադիմումին կից ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը. պետտուրքի վճարման անդորրագիրը, ավտոբուսային թթ. 12, 15, 17 երթուղիների սպասարկման ծառայությունների մատուցման թթ. 6, 10, և 11 պայմանագրերի քսերոպատճենները, Ստեփանակերտի քաղաքապետի 2013թ. հունվարի 15-ի թիվ 28-Ա որոշման պատճենը, Պատասխանողից բռնագանձման ենթակա 168.000 /հարյուր վաթսուներե հազար/ ՀՀ դրամ գումարի հաշվապահական հաշվարկը և Հայցվորի՝ որպես իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը /ընդամենը 13 թերթ/:

Հայցադիմումից նկատելի է, որ նրանում նշված չեն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները և հայցապահանջները հաստատող ապացույցները: Նման պայմաններում, Առաջին ատյանի դատարանը պարտավոր է եղել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով վերադարձնել հայցադիմումը կամ գործի արդյունավետ դատաքննությունն ապահովելու նպատակով իրականացնել գործի դատական քննության նախապատրաստման փուլ, դատավարական մի ինստիտուտ, որը նախորդում է դատաքննության փուլին:

ԼՂՀ դատական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով, **որպես կանոն**, իրականացվում է գործի դատական քննության նախապատրաստական փուլ: ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 141-րդ և 144-րդ հոդվածները, գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով, կողմերի մասնակցությամբ նույնպես

նախատեսում են գործի դատական քննության նախապատրաստական փուլի ինստիտուտը: Այս փուլում օրենսդիրը սահմանել է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները, որոնք ուղղված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը, որոնցով կողմերը կարող են հիմնավորել իրենց պահանջները և առարկությունները և այլն:

Դատավարության այս փուլը, որպես գործի արդյունավետ քննության ապահովման ուղղված կառուցակարգ, նպաստում է օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելուն՝ երաշխավորելով վերջինիս կայունությունը դատական ակտերի վերանայման փուլերում:

Գերագույն դատարանը, մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում, անդրադառնալով վճռի հիմնավորվածության հարցին, նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՞ փաստական, և թե՞ իրավական հիմնավորումները: Իսկ հիմնավորված վճիռ կայացնելու նախապայմաններից մեկն էլ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը ճիշտ որոշելն է: Վերջինս գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դրսևորվում է նախնական դատական նիստում հայցի առարկան և հիմքը պարզելով, ինչպես նաև կողմերի հետ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և կողմերի միջև ապացուցման պարտականության բաշխման հարցը քննարկելով /ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետեր/:

Չնայած սույն գործով կայացված վճռում վկայակոչված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, սակայն գործի նյութերից չի երևում, թե Առաջին ատյանի դատարանն այդ կապակցությամբ ինչպիսիք գործողություններ է կատարել: Մասնավորապես, 2015թ. մարտ ամսվա կտրվածքով չեն պահանջվել և հետազոտվել Հայցվորի մոտ գտնվող ըստ չվացուցակի և փաստացի ներկայացման վերաբերյալ փաստաթղթերը, երթուղիների վերահսկողության գրանցամատյանները, Պատասխանողի մոտ գտնվող ուղեգրերը, ինչպես նաև կողմերի միջև կատարված գրագրությունները:

Առաջին ատյանի դատարանը գտնելով, որ Հայցվորը պայմանագրով սահմանված ծառայությունները կատարել է թերի, եզրահանգել է, որ ծառայությունների պատշաճ մատուցված չլինելու պարագայում Պատասխանողի մոտ չի կարող ծագել պայմանագրերով սահմանված վճարման պարտավորություն: Չվիճարկելով Առաջին ատյանի դատարանի նման դիրքորոշումը, Գերագույն դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վճարովի ծառայության մատուցման պայմանագրում այլ բան նախատեսված չլինելու դեպքում, վեճին ըստ էության ճիշտ

լուծում տալու համար անհրաժեշտ է ղեկավարվել պարտավորական իրավունքի ընդհանուր դրույթներով, որոնցով կարգավորված է պարտավորության անպատշաճ կատարման ինստիտուտը:

Վերը վերլուծության ենթարկված հանգամանքների համատեքստում Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատական ատյանների կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն ստուգվել, հետազոտվել և գնահատվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական տվյալներն ու հանգամանքները, և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 49-րդ, 50-րդ, 230-րդ հոդվածների պահանջների խախտման արդյունքում դատարանները կայացրել են չհիմնավորված և չպատճառաբանված դատական որոշումներ:

Հետևաբար, միայն նոր դատաքննության ընթացքում վերոնշյալ թերությունները և խախտումները վերացնելու պարագայում հնարավոր կլինի գործով ընդունել այս կամ այն օրինական և հիմնավորված որոշումը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը և արձանագրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր՝ «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Մեսրոպյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքներով:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ _____ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ _____ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

_____ Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ